ԹՈՒՐՔԻԱՆ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԲՆՕՐԱՆ

Վատ կյանքը նման է թուրքի հետ հարևան լինելուն:

Քրդական ասացվածք

Սատանան շատ կերպարանքներ ունի, որոնցից մեկն էլ թուրքի է:

Ասորական ասացվածք

Հիմնաբառեր. *հանցավորություն, ահաբեկչության ֆինանսավորում, թմրամիջոցներ, զենք, նավթագազային ռեսուրսներ*

Վերջին տասնամյակում ակտիվորեն ներգրավվելով մի շարք հակամարտություններում և դրանցում կենտրոնացնելով իսլամիստ ծայրահեղականների ներուժը՝ Թուրքիան վերածվել է ահաբեկչության «արտահանման» հանգուցային կենտրոնի: Ընդ որում, ահաբեկչության սնուցմանն ու ֆինանսավորմանն է ծառայեցվում վերջինիս միջնորդությամբ տարբեր հանցավոր գործարքներից, ներառյալ՝ նավթագազային ռեսուրսների, զենքի և թմրամիջոցների ապօրինի վաճառքից ստացվող հասույթը:

Իսկ նման պայմաններում մնում է եզրակացնել, որ թուրքական հանցավոր նկրտումների հանդեպ միջազգային հանրության հանդուրժողականությունը հիմնավորվում է գերտերությունների մասնավոր շահերի մեկտեղմամբ:

Շուրջ 31 հակամարտություն 9 երկրի հետ՝ վերջին 10 տարիների ընթացքում… Թուրքիայի ագրեսիվ և ահաբեկչական պահվածքն արդեն վաղուց հատել է «թույլատրելիության» աներևույթ եզրագիծը:

Ցամաքային և ծովային սահմաններ կիսելով 9 երկրի հետ՝ Թուրքիան ներկայում սուր հակամարտությունների մեջ է առնվազն 5-ի (Հունաստանի, Սիրիայի, Իրաքի, Լիբիայի, Հայաստանի) հետ՝ միաժամանակ դրանցից 3-ում ապահովելով նաև բռնի ռազմական ներկայություն: Հունաստանի հետ Թուրքիայի հակամարտության կիզակետում Կիպրոսի հարցն է, Լիբիայում՝ Թուրքիայի էներգետիկ հավակնությունները Միջերկրական ծովի արևելյան ափերում, Իրաքում՝ քուրդ զինյալների դեմ պայքարի պատրվակով քաղաքական և տնտեսական շահե-

Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ է, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հրավիրյալ փորձագետ: Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել մի շարք եվրոպական բուհերում: Հեղինակ է 43 գիտական և 6 գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

ORCID ID https://orcid.org/0000-0002-5854-2473

ը ռազմական միջամտությամբ իրացնելու անհագուրդ ձգտումները: Իրաքում, ինչպես և Սիրիայում, Թուրքիան բացահայտ աջակցում էր իսլամիստ գրոհայիններին և «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորմանը՝ վերջիններիս ներուժը լայնորեն ծառայեցնելով սեփական հանցավոր նպատակներին: Նշված բոլոր դեպքերում, սակայն, առկա է մեկ ընդհանրություն. Թուրքիայի անհագ ձգտումը՝ տնօրինելու ահաբեկչական խմբավորումների տիրապետության տակ հայտնված նավթագազային ռեսուրսները...

Համաշխարհային հանրությանը հայտնի են բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս Թուրքիայի համագործակցությունն ահաբեկիչների, այդ թվում՝ Սիրիայից և Լիբիայից ժամանած ջիհադականների հետ: Հայաստանի հետ հակամարտության սրումը պայմանավորված է բոլորովին վերջերս սանձազերծված Արցախյան 2-րդ պատերազմի ընթացքում Սիրիայի ջիհադականների[1], որակավորված թուրքական զինուժի, ռազմական տեխնիկայի և զինամթերքի մատակարարումների տեսքով Ադրբեջանին ցուցաբերված աջակցությամբ:

Ըստ որոշ գնահատականների՝ վերջին տասնամյակում Թուրքիան Սիրիայում հավաքագրել և տեղակայել է 29 տարբեր ահաբեկչական խմբավորումներ[2]: Այդուհանդերձ, Թուրքիայի անմիջական դերը, անկասկած, չի սահմանափակվում միայն ահաբեկչական խմբավորումների հավաքագրման և տեղակայման սխեմաների կիրառմամբ. առավել հայտնի լինելով որպես տարանցիկ երկիր Սիրիա մեկնել ցանկացող օտարերկրացի գրոհայինների համար՝ Թուրքիան հետզհետե վերածվել է արմատական իսլամիստների մատակարարման հիմնական աղբյուրի[3]:

Թեև չկա միասնական «խողովակ» Սիրիա օտարերկրացի զինյալների մուտքի ու ելքի համար, և հավասարապես կիրառվում են ցամաքային, օդային և ծովային երթուղիները, այդուհանդերձ, բռնարար ծայրահեղականների գերակշիռ մասը Սիրիա է ներխուժում Թուրքիայի տարածքով՝ տարանցմամբ: Առավել ևս, որ դրա համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները. Թուրքիան ավելի քան 69 երկրների կառավարությունների հետ ստորագրել է առանց վիզայի ճանապարհորդության պայմանագրեր, որոնք սահմանափակում են ճանապարհորդների և նրանց փաստաթղթերի զննում կատարելու պահանջը[4]: ԵՄ քաղաքացիների մեծամասնության համար վիզա չի պահանջվում, նրանցից ոմանք նույնիսկ կարող են ճանապարհորդել նույնականացման քարտերով՝ ուղիղ կամ անուղղակի առևտրային թռիչքներ կատարելով դեպի թուրքական օդանավակայաններ: Հիշեցնենք, որ առանց անձը հաստատող փաստաթղթերի, Թուրքիայի սահմանապահ ուժերի գիտությամբ և թույլտվությամբ միջազգային թռիչքների կազմակերպման նույն «արատավոր» փորձառությունն է կիրառվել նաև սիրիացի ահաբեկիչներին Արցախում վայրագությունների իրականացման համար Թուրքիայի օդանավակայաններից Ադրբեջան տեղափոխելիս[5]:

Ահաբեկչական խմբերի անմիջական մասնակցությամբ են իրագործվում զենքի, թմրանյութերի և նավթամթերքի ապօրինի մատակարարման թուրքական հանցավոր գործարքները, որոնց լուրջ մասնակցություն ունեն նաև գերտերությունները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան և այլն: Թուրքիան, փաստացիորեն, ստանձնել է գերտերությունների «թանկարժեք» շահերի սևագործ սպասարկողի դերը, որի դիմաց «վայելում է» համաշխարհային հանրության լռությունն ու առերևույթ անտարբերությունը սեփական հանցավոր նկրտումների և ահաբեկչության տարածման նկատմամբ:

[1] Abdulrahim R., 'Turkish-Backed Syrian Fighters Join Armenian-Azeri Conflict'/ The Wall Street Journal, Oct. 14, 2020, https://www.wsj.com/articles/turkish-backed-syrian-fighters-join-armenian-azeri-conflict-11602625885

[2] Ghanzanchyan S., "Turkey has been cultivating and nurturing 29 terrorist groups in Syria, Armenian Ambassador tells OSCE Permanent Council", Public Radio of Armenia, November 6, 2020 / https://en.armradio.am/2020/11/06/turkey-has-been-cultivating-and-nurturing-29-terrorist-groups-in-syria-armenian-ambassador-tells-osce-permanent-council/

[3] Starr S,. "A Deeper Look at Syria-Related Jihadist Activity in Turkey" / CTC Sentinel, August 2014, Vol. 7. Issue 8 https://ctc.usma.edu/wp-content/uploads/2014/09/CTCSentinel-Vol7Iss82.pdf

[4] Rasmussen N.J., "Countering Violent Islamist Extremism: The Urgent Threat of Foreign Fighters and Homegrown Terror", Hearing before the House Committee on Homeland Security, 114th Cong. 2–3 (Feb. 11, 2015), https://docs.house.gov/meetings/HM/HM00/20150211/102901/HHRG-114-HM00-Wstate-RasmussenN-20150211.pdf.

[5] «Ինչ մեխանիզմով են ահաբեկչական խմբերը հասնում Արցախ. ՀՀ իրավապահների բացահայտումները», Sputnik Արմենիա, 02.11.2020, https://sptnkne.ws/E5sM.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Թուրքիան՝ որպես թմրաբիզնեսի համաշխարհային շուկայի խոշոր խաղացող (2018 թ. տվյալներով)[6]

Թմրամիջոցի տեսակը	Առգրավված ծավալը (կգ)	Թուրքիայի դիրքը թմրամիջոցների աշխարհի խոշոր մատակարարների ցանկում՝ ըստ առգրավված ծավալի	Թուրքիայի մասնաբաժինը Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանում	Թուրքիայի մասնաբաժինն աշխարհում առգրավված թմրամիջոցների ընդհանուր ծավալում[7]
Ամֆետամինային տիպի խթանիչներ (ATS)՝ բացառությամբ էքստազիի	44,078	6-րդ	83 %	0.9 %
Կոկաին (Cocaine)	7,911	19-րդ	40.5 %	0.6 %
Էքստազի (Ecstasy)	13,150	4-րդ	86 %	5.8 %
Հաշիշ (խեժ) (Hashish (resin))	569,216	10-րդ	89 %	1.6 %
Հերոին և մորֆին (Heroin and Morphine)	262,078	1-րդ	89 %	9.9 %
Մարիխուանա խոտ (Marijuana (herb))	1,038,408	18-րդ	64.3 %	0.9 %
Ափիոն (Opium)	10,052	9-րդ	90.4 %	0.09 %
Այլ թմրամիջոցներ	30,646,984	6-րդ	97 %	4.4 %

Փաստորեն, շնորհիվ «հանցավոր լարախաղացության», Թուրքիային հաջողվել է փոխշահավետ գործարքների միջոցով կախվածության մեջ պահել ինչպես ահաբեկչական խմբավորումներին, այնպես էլ նրանց մատակարարած նավթագազային ռեսուրսներով սնուցվող գերտերություններին:

Ըստ ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODG)՝ Թուրքիան լուրջ դերակատարում ունի թմրաբիզնեսի համաշխարհային շուկայում (տե՛ս աղյուսակ 1): Թեև աղյուսակում ընդգրկված են մատակարարվող թմրամիջոցների՝ իրավապահ մարմինների կողմից պաշտոնապես բացահայտված և առգրավված ծավալները, որոնք շրջանառվող իրական ծավալների մի մասն են միայն, այդուհանդերձ, նույնիսկ այդ ցուցանիշներով ակնառու է դառնում Թուրքիայի՝ որպես թմրաբիզնեսի համաշխարհային շուկայում խոշոր խաղացողի հանդես գալու փաստը:

Մասնավորապես՝ հերոինի և մորֆինի, էքստազիի և ամֆետամինային այլ խթանիչների, ափիոնի և հաշիշի առգրավված շրջանառության ծավալներով Թուրքիան աշխարհի խոշոր մատակարարների տասնյակում է, իսկ մարիխուանայի և կոկաինի ծավալներով՝ քսանյակում: Հերոինի և մորֆինի 2018 թ. առգրավված շրջանառության ծավալով՝ նա բացարձակ առաջատար է՝ համաշխարհային ծավալի մոտ 10% մասնաբաժնով: Վերոնշյալ թմրամիջոցների մատակարարման հանցավոր սխեմաներում առաջատար ակտիվություն են դրսևորում ԱՄՆ-ն, Իրանը, Կոլումբիան, Մեքսիկան, Նիդեռլանդները, Իսպանիան, Միացյալ Թագավորությունը, Պակիստանն ու Աֆղանստանը:

Եվ այս ամենն ուղեկցվում է մարդկանց ստրկացման, թրաֆիքինգի, ապօրինի փոխպատվաստումների համար օրգանների առգրավման և մարդկային ճակատագրերի նկատմամբ ծանր հանցակազմ պարունակող այլ հանցավոր սխեմաների անարգել կիրառմամբ: Մարդու օրգանների ապօրինի առևտրի թուրքական սև շուկան հիմնվում է հակամարտության գոտիներից Թուրքիա ներգաղթող փախստականների վրա: Թուրքիայում արդեն իսկ կուտակվել է մարդու օրգանների հնարավոր «մատակարարների» հսկայական ռեսուրս. ավելի քան 3 միլիոն սիրիացի փախստականներ

[6] UNODC, United Nations Office on Drugs and Crime, DATAUNODC / https://dataunodc.un.org/data/drugs/Global%20Seizures

[7] Թուրքիայի մասնաբաժինը Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանում և աշխարհում առգրավված թմրամիջոցների ընդհանուր ծավալներում հաշվարկել է հեղինակը՝ ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի պաշտոնական տվյալների հիման վրա:

հատել են Թուրքիայի սահմանն՝ իրենց երկրում բռնությունից խուսափելու համար՝ ակամայից հայտնվելով «օրգանների վաճառք՝ հանուն գոյատևման» ձևաչափի գործարքների հերթական զոհը դառնալու վտանգի առջև: Ընդ որում, նմանօրինակ գործարքների պարտադիր նախապայման է դոնորի և բուժառուի միջև ազգակցական կապը հիմնավորող կեղծված փաստաթղթերի ապահովումը, իսկ բարձրորակ կեղծված անձնագիր կամ նույնականացման քարտ Թուրքիայում հնարավոր է պատվիրել ընդամենը 200 ԱՄՆ դոլարի դիմաց[8]: Չէ՞ որ 2008 թ. ընդունված[9] և 2018 թ. վերանայված[10]՝ «Օրգանների թրաֆիքինգի և փոխպատվաստումային զբոսաշրջության մասին ստամբուլյան հռչակագիրը» երկրում մարդու օրգանների առքն ու վաճառքն օրենքով չի թույլատրվում... Իսկ ազգակցական կապով պայմանավորված և սերտ բարեկամական կարեկցանքից դրդված, սեփական օրգանների «նվիրաբերումը» մի կողմից ազատում է բուժանձնակազմին ապօրինի փոխպատվաստման գործարքի մասնակիցը լինելու հանցավոր բեռից, իսկ մյուս կողմից՝ լուծվում է դոնորի անձի իսկությունը գաղտնի պահելու հույժ կարևոր խնդիրը:

Այս ամենի հետ մեկտեղ, հաճախակի են դեպքերը, երբ դոնորներին օրգանների դիմաց գումարը չի վճարվում խոստացված ամբողջ ծավալով: Որոշ աղբյուրների հավաստմամբ՝ երիկամի վաճառքի դիմաց սիրիացի փախստականներին թուրք միջնորդները վճարում են ընդամենը 5,000 ԱՄՆ դոլար՝ նախապես խոստացված 10,000-ի փոխարեն[11]: Մինչդեռ, Թուրքիայի սև շուկայում դոնորական երիկամներն առաջարկվում են չարդարացված բարձր՝ 100,000 – 140,000 ԱՄՆ դոլարի հասնող գներով[12]՝ գերշահույթներ ապահովելով միջնորդ օղակներին:

UNODG-ի տվյալների շտեմարանի[13] մանրազնին ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Թուրքիան «փայլում» է նաև հանցավորության այլ դրսևորումներում: Մասնավորապես՝ աշխարհում առաջատար է 100,000 բնակչի հաշվով գրանցված մարդկանց, այդ թվում՝ երեխաների առևանգման դեպքերի քանակով. 2014 թ.՝ 1 տարվա ընթացքում, Թուրքիայի ոստիկանական ծառայությունն արձանագրել է 32,953 մարդու առևանգման դեպք, որը համարժեք է 42.7%-ի՝ 100,000 բնակչի հաշվով: 2014 թվականից հետո այլևս նման տվյալներ հասանելի չեն, քանի որ Թուրքիան պարզապես դադարել է դրանք տրամադրել ՄԱԿ-ի համապատասխան կառույցներին: Ինչևիցե, սա վստահաբար կարելի է հանցավորության խտացման աննախադեպ ցուցանիշ դիտարկել ամբողջ աշխարհի մասշտաբով, քանզի 2003-2018 թթ. որևէ երկրում մարդկանց առևանգումների նման բարձր հաճախականություն երբևէ չի արձանագրվել:

Բերված փաստերը ձևավորում են թուրքական հանցավոր հասարակության համապատկերը՝ ընդգծելով հասարակության շրջանում խնդիրների լուծման հանցավոր ճանապարհների տարածման մակարդակը: Առավել ուշագրավ է այն իրողությունը, որ նույնիսկ թուրքական հանցավոր գործունեության վերաբերյալ «աղաղակող» փաստերի ողողվածության պայմաններում ոճիրներն ու ոճրագործները դեռևս անպատիժ են մնում, և ավաղ... անպատիժ էլ կմնան, քանի դեռ սոսկ «բարեկիրթ» աշխարհի հայեցակարգային փաստաթղթերում կարևորվող քաղաքակրթական և մարդասիրական արժեքները ստորադասվում են մի խումբ երկրների փոխադարձ շահերին:

[8] Capatides Ch., Williams H., "Desperate Syrian refugees are resorting to selling their organs on the black market just to pay rent", CBS News, May 19, 2020 / https://www.cbsnews.com/news/desperate-syrian-refugees-selling-organs-to-survive/

[9] The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, Clinical Journal of the American Society of Nephrology, Clin J Am Soc Nephrol 3: 1227–1231, 2008. doi: 10.2215/CJN.03320708, https://cjasn.asnjournals.org/content/clinjasn/3/5/1227.full.pdf?with-ds=yes

[10] The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, Update and the 2018 Version Declaration / https://www.declarationofistanbul.org/about-the-declaration/history-and-development

[11] Capatides Ch., Williams H., "Desperate Syrian refugees are resorting to selling their organs on the black market just to pay rent", CBS News, May 19, 2020 / https://www.cbsnews.com/news/desperate-syrian-refugees-selling-organs-to-survive/

[12] Փախլյան Ա.Ա., Մարդու օրգանների ապօրինի փոխպատվաստում. բիզնես, թե ահաբեկչություն..., «Ամբերդ» տեղեկագիր № 4(5) – 2020, էջ 95-100, https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%202020.4.pdf

[13] DATAUNODC, Kidnapping https://dataunodc.un.org/data/crime/kidnapping

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ինչ մեխանիզմով են ահաբեկչական խմբերը հասնում Արցախ. ՀՀ իրավապահների բացահայտումները», Sputnik Արմենիա, 02.11.2020, https://sptnkne.ws/E5sM
2. Փախլյան Ա.Ա., Մարդու օրգանների ապօրինի փոխպատվաստում. բիզնես, թե ահաբեկչություն..., «Ամբերդ» տեղեկագիր № 4(5), 2020, https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%202020.4.pdf
3. Abdulrahim R., Turkish-backed Syrian fighters join Armenian-Azeri conflict: The Wall Street Journal, Oct. 14, 2020, https://www.wsj.com/articles/turkish-backed-syrian-fighters-join-armenian-azeri-conflict-11602625885
4. Capatides Ch., Williams H., Desperate Syrian refugees are resorting to selling their organs on the black market just to pay rent, CBS News, May 19, 2020, https://www.cbsnews.com/news/desperate-syrian-refugees-selling-organs-to-survive/
5. Channing May, Transnational crime and the developing world. Global Financial Integrity, March 2017, p. xii, https://gfintegrity.org/report/transnational-crime-and-the-developing-world/
6. DATAUNODC, https://dataunodc.un.org/ru
7. Ghanzanchyan S., Turkey has been cultivating and nurturing 29 terrorist groups in Syria, Armenian Ambassador tells OSCE Permanent Council, Public Radio of Armenia, November 6, 2020, https://en.armradio.am/2020/11/06/turkey-has-been-cultivating-and-nurturing-29-terrorist-groups-in-syria-armenian-ambassador-tells-osce-permanent-council/
8. Rasmussen N.J., Countering violent Islamist extremism: The urgent threat of foreign fighters and homegrown terror, Hearing before the House Committee on Homeland Security, 114th Cong. 2–3 (Feb. 11, 2015), https://docs.house.gov/meetings/HM/HM00/20150211/102901/HHRG-114-HM00-Wstate-RasmussenN-20150211.pdf.
9. Starr S., A deeper look at Syria-related Jihadist activity in Turkey. CTC Sentinel, August 2014, Vol. 7. Issue 8, https://ctc.usma.edu/wp-content/uploads/2014/09/CTCSentinel-Vol7Iss82.pdf
10. The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, Clinical Journal of the American Society of Nephrology, Clin J Am Soc Nephrol 3: 1227–1231, 2008. doi: 10.2215/CJN.03320708, https://cjasn.asnjournals.org/content/clinjasn/3/5/1227.full.pdf?with-ds=yes
2. The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, Update and the 2018 Version Declaration, https://www.declarationofistanbul.org/about-the-declaration/history-and-development

Анна ПАХЛЯН
Приглашенный эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

ТУРЦИЯ - КОЛЫБЕЛЬ МЕЖДУНАРОДНОЙ ПРЕСТУПНОСТИ И ТЕРРОРИЗМА

За последнее десятилетие, активно участвуя в ряде конфликтов и вовлекая в них потенциал исламистских экстремистов, Турция стала ключевым «экспортным» центром терроризма. В то же время доходы от различных преступных операций при посредничестве Турции, в том числе доходы от незаконной продажи нефтегазовых ресурсов, оружия и наркотиков, используются для подпитки и финансирования терроризма.

И в таких условиях остается заключить, что толерантность международного сообщества к турецким криминальным устремлениям основана на сочетании частных интересов сверхдержав.

Ключевые слова: *преступность, финансирование терроризма, наркотики, оружие, нефтегазовые ресурсы*

Anna PAKHLYAN
Invited expert of «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics, Associate Professor

GEOECONOMIC CHRONICLE

TURKEY - THE CRADLE OF INTERNATIONAL CRIME AND TERRORISM

Having actively participated in a number of conflicts over the past decade, involving the potential of Islamist extremists in them, Turkey has become a key «export» center for terrorism. At the same time, proceeds from various criminal transactions mediated by Turkey, including proceeds from the illegal sale of oil and gas resources, weapons and drugs, are used to fuel and finance terrorism.

In such conditions, it remains to conclude, that the tolerance of the international community to Turkish criminal aspirations is based on a combination of private interests of the superpowers.

Keywords: *crime, terrorist financing, drugs, weapons, oil and gas resources*